ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

12 օգոստոսի 2013 թվական N 28-Ա

ԿԱՐԻՆԵ ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի <գ> կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 162-րդ հոդվածներով՝ մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Կարինե Դովլաթբեկյանին ս/թ օգոստոսի 20-ից սեպտեմբերի 20-ը ներառյալ տրամադրել ամենամյա հերթական արձակուրդ՝ 20 աշխատանքային օր և լրացուցիչ արձակուրդ՝ 4 աշխատանքային օր:

Նշված ժամանակահատվածում, պաշտոնի անձնագրին համապատասխան, վարչության պետի պարտականությունները դնել նույն վարչության գլխավոր մասնագետ Նարինե Ճաղարյանի վրա:

<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճարել միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

12 օգոստոսի 2013թ.
ք. Իջևան